

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳԱԿԱՆ  
ՆԱԿԱՐԳՈՒՄԻ ԳՐԳՐԱԿԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»  
Համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն  
Ստեփանակերտ  
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն  
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն  
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման  
կենտրոն» ՊՈԱԿ  
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»  
համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.  
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած  
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Գրականից փոխառված բառերը բարբառային միջավայրում «մաքուր» չեն մնում, կրում են բարբառի ազդեցությունը, որով էլ արտահայտվում է գրական միավորի գրականացվածության աստիճանը:

Ըստ այդմ գրականից մուծված միավորները կարելի է խմբավորել ըստ գրականացվածության ընդգրկման աստիճանի:

ա) Երբ գրական միավորը փոխառվում է իր ձևաբովանդակային լրիվ ընդգրկմամբ եւ իր գործածության ոլորտով:

բ) Երբ փոխառված գրական տարրը բարբառացվում է, այսինքն բարբառածեւ, գրականիմաստ:

գ) Երբ գործածության ոլորտն ընդգրկում է միայն բարբառային միջավայրը, այսինքն բարբառիմաստ, գրականածեւ:

Այսպիսով, գրականացումը լեզվական երեւոյթ է, եւ այն պայմանավորող հիմնական գործոնը լեզվականն է, այն է գրականացումը լեզվական իրողության բարբառի օրինաչափ զարգացման ծնունդ եւ արդյունք է: Մյուս բոլոր գործոնները պատճառաբանվում եւ ածանցվում են վերոնշյալից:

*Արինա Բալասանյան  
ԱրՊԳ*

### **Պատմության ծայնը**

*(հայրենասիրության գաղափարը Ն. Ջարյանի «Արա Գեղեցիկ»  
դիցապատմական ողբերգության մեջ)*

Ռուս մեծանուն քննադատ Վ. Գ. Բելինսկին գրել է. «Մենք դիմում ու հարցաքննում ենք անցյալին, որպեսզի այն մեզ բացատրի մեր ներկան եւ ակնարկի մեր ապագայի մասին»: (Բելինսկի, երկեր, հ. 10, էջ 388): Հեղափոխական դեմոկրատի այս կարծիքը կիսել են նաեւ հայոց մեծերը՝ Ռաֆֆին, Հովհ. Թումանյանը, Սուրացանը, եւ բոլոր նրանք. ովքեր անդրադարձել են մեր ժողովրդի պատմությանը՝ ժամանակակից այրող հարցերը արծարծելու համար: Բելինսկու այդ խորհրդին մեկ անգամ չի անդրադարձել նաեւ տաղանդավոր գրող Ն. Ջարյանը: Դեռեւս 1940 թվականին նա տպագրեց «Արչակ եւ Շապուհ» չափածո վիպերգը՝ 5-րդ դարի մատենագիր Փավստոս Բյուզանդի «Պատմություն Հայոց» գրքի մոտիվներով: Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբից Ջարյանը ընթերցողներին հանձնեց իր

«Ուղերծ իմ ժողովրդին», «Միհրդատի դամբարանը», «Ձայն հայրենական» ստեղծագործությունները, որոնցում արտացոլված են հայրենասիրության, ազատասիրության, հերոսականության լուսավոր գաղափարները, ընդգծված այն միտքը, որ ժողովուրդը զորեղ և անմահ է իր հայրենի հողով, իր սեփական անկախ պետականությամբ:

Հենց մեծ հայրենականի ընթացքում էր՝ կոնկրետ 1944 թվականին, երբ լույս աշխարհ եկան Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Ատ. Չորյանի «Պապ թագավոր» և Ն. Ջարյանի «Արա Գեղեցիկ» պատմական բարձրարժեք երկերը:

«Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը հայրենասիրական գործ է: Նրանում գեղարվեստորեն վերարտադրված է հայ ժողովրդի ազատագրական պայքարը նվաճողական քաղաքականություն վարող Ասորեստանի դեմ մ. թ. ա. 9-8-րդ դարերում: Այսպիսով պատմությունը ներկայացվեց որպես հերոսականության դաս մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ 1915 թվականի հայ ժողովրդի ցեղասպանությանն անմիջապես մասնակից, Վիլհելմ Երկրորդի ժառանգորդ Ադոլֆ Հիտլերը սպառնում էր՝ ժողովուրդներին ոչնչացնել ֆիզիկապես ու բարոյապես: Հայոց մեծ եղեռնը չէր կարող չիլի՜ն ո՛չ ժողովուրդը և ո՛չ էլ նրա ստեղծագործող զավակները, որոնց թվում և Ն. Ջարյանը: Մինչև Ն. Ջարյանը ոչ քիչ թվով հեղինակներ են մշակել Արայի առասպելը: Դրանցից են Հովհան Վանանդեցին, Գաբրիել Պատկանյանը, Խտալացի վիպագիր Բարիլլին, ռուս գրող Կորոտկովը, ամերիկուհի Դարզընը: Այս բոլոր գրողների համեմատությամբ միանգամայն նոր խոսք էր Ջարյանի երկը, թե գաղափարական բովանդակությամբ, և թե գեղարվեստական առանձնահատկություններով: Ականավոր գրողը կարողացել է դիցաբանական առասպելը դնել պատմական հողի վրա, բացահայտել նրա հայրենասիրական – հերոսական բնույթը, ստեղծել պատմականորեն և գեղարվեստորեն ճշմարտացի մարդկային բնավորություններ: Նա հաջողությամբ է լուծել պատմականի և արդիականի փոխհարաբերության խնդիրը, անցյալը ծառայեցնելով ներկային՝ հանուն ապագայի:

Ողբերգության մեջ Ջարյանի պատմական հերոսները օժտված են մարդկային կրթերով, նոր սերնդի հետ խոսում են որպես ժամանակակիցներ: Գրողը ուսուցանեց, որ անձնական շահերից պետք է բարձր դասել հայրենիքի սրբությունները, երկրին ծառայել անձնվիրաբար, ժողովրդին պաշտպանել բոլոր արհավիրքներից:

Գրականագետ Սուրեն Աղաբաբյանը գրել է. «Ն. Ջարյանը միանգամայն նոր մեկնաբանություն է տվել սիրո ողբերգությանը, համարձակորեն նրա մեջ մտցնելով հասարակական – քաղաքական կոնֆլիկտը, դա դարձնելով ողբերգության առանցքը: Պատմությունը ներկայացվում է իբրև երկու հակամարտ ուժերի, երկու հակադիր հասարակական իդեալների քախում: Ազգային – պետական իրարամերժ շահերից ծնունդ է առնում հիմնական գաղափարը, որը կարմիր թելի պես անցնում է ողբերգության միջով»:

Արայի կերպարում խտացված են մեր ժողովրդի բնավորության բնորոշ գծերը, հոգեկան ապրումներն ու ձգտումները: Արան նվիրյալ հայրենասեր է, երկրի ազատության ու անկախության համար մարտնչող անհատ: Նա միաժամանակ խաղաղասեր է, սակայն երբ նկատում է, որ Շամիրամը ձգտում է գայթակղել իրեն՝ Հայաստանը Ասորեստանի ոտքերի տակ նետելու միտումով, ըմբոստանում է, կազմակերպում ժողովրդի ազատագրական պայքարը, իր անձը զոհում թշնամական Ասորեստանի դեմ մղվող պատերազմում:

Ն. Ջարյանի մարմնավորած Արան ազատաբաղձ է, նրա սիրո առարկան Հայաստանն է, որից էլ բխում են նրա ապրումներն ու ձգտումները: Արան նաև լավատես է, ազնիվ: Երբ նա վերջապես հասկանում է Ասորեստանի նենգ թագուհի Շամիրամի նպատակը, ասորական դեսպան Ասուր Գաբբուին դիմում է.

Վերադարձեք Նինվե և ասացեք Շամիրամին,

Թե բռնության շնչից սիրո ծաղիկը թառամեց,

Եվ նրա տեղ աճեց ատելության կաղնին,

Եվ ասացեք Արան չունի սովորություն,

Գոռոզ ոճին պատասխանել ոճով խոնարհությամբ:

Ինչպես տեսնում ենք Արան ըմբոստանում է ամեն կարգի բռնության դեմ, թագավորի ներպարից գնում դեպի անձնվեր հայրենասերի առինքնող :աշխարհը: Արայի մահից հետո էլ ժողովուրդը նրան տեսնում է պայքարի ըմբոստ շարքերի մեջ: Գինեվարպետ Արբակի շուրթերով Ն. Ջարյանն ընդգծել է.

Այո, կենդանացած է, ես տեսա,

Մազերը բոց, նստած յուր հրեղեն արծվի վրա.

Նետվեց փղերի դեմ ինչպես մրրիկ մի ամեհի,  
Ապա ջարդեց ու փախցրեց զորքերն ասորական,  
Անմահ է նա... ես գիտեի... ես միշտ ասում էի...

«Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգության մեջ գլխավոր կերպարները երկուսն են՝ Արան ու Շամիրամը: Նրանց հակադրությունից էլ բխում են բոլոր հերոսների արարքները: Արան արդար է, բարի, Շամիրամը նենգ ու խարդախ: Արան վեհանձն է, լուսեղ, Շամիրամը բռնակալ է ու մութ:

Ծանոթանալով Ն. Ջարյանի ողբերգությանը, կրկին ու կրկին ընդգծվում է գրական բարձրարժեք երկերի գործառական նշանակությունը: Շամիրամի կերպարի մեջ նշմարում ես, ես՝ օսմանյան փաշաների նենգությունն ու դաժանությունը, ես՝ ազերի – թուրք կառավարիչների նվաճողական քաղաքականությունն ու կեղծիքը:

Արայի կերպարի առիքնող գծերը մեզ տանում են դեպի մեր նորոյ ազատամարտիկների աշխարհը: Նրա անվան փոխարեն շնջում ես Ավոյի, Բեկորի եւ մեր հազարավոր նահատակների սուրբ անունները: Նույնը կարելի է ասել նաեւ Արայի սիրած կնոջ՝ Նուարդի մասին, որի հանդեպ ինքը՝ Արան լցված էր ջերմությամբ եւ ասում էր.

Նուարդ... հայոց աղբյուրն է քաղցրահամ,

Հայոց լեզուն է քաղցրախոս, հայոց խնձորենին:

Ն. Ջարյանի «Արա Գեղեցիկ» երկը բեմադրվել է եւ՝ Գյումրիում, եւ՝ Երեւանում ու արժանացել բարձր գնահատականի: Այն կարելի է բեմականացնել նաեւ այսօր, որովհետեւ նենգ է մեր հարեւան թշնամին, իսկ թշնամու հանդեպ պետք է չոր պահել ոչ միայն վառողը, այլեւ արթուն պահել մեր պատմական անցյալի հերոսական ոգին, որ Արայից հասնում է մինչեւ Անդրանիկ, Նժդեհ, Նժդեհից, Ավոյից մինչեւ մեր սահմանները հսկող քաջազուհեները:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,  
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ  
*Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,  
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

